ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության <<Երևանի Լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Հայ պատմագրության ուսուցումը դպրոցի միջին և ավագ օղակներում

Կատարող՝ Մարինե Գրիգորյան

_____<<Գյումրու թիվ 23 միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ_____

դպրոց

__Ղեկավար՝ ____մ.գ.թ., դոցենտ Աննա Յայլոյան

ԳՅՈՒՄՐԻ - 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….3

ԳԼՈՒԽ 1. Հայ պատմագրության ուսուցումը դպրոցի միջին դասարաններում……5

ԳԼՈՒԽ 2. Հայ պատմագրության դասավանդումը ավագ դպրոցում ……..15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ……20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……..21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ գրականության հիմքում ընկած է պատմագրությունը. հայ ինքնուրույն գրականությունը սկզբնավորվում է գրերի ստեղծումից անմիջապես հետո՝ թարգմանական աշխատանքներին զուգընթաց: Փիլիսոփայական կոթողային արժեքների, եկեղեցական գրականության (ճառ, խրատ, հոգևոր երգ) կողքին սկզբնավորվում և բուռն զարգացում է ապրում հայ պատմագրությունը: Այն դառնում է ժամանակաշրջանի մատենագրության առաջատար, բազմաբովանդակ, ընդգրկուն տեսակը: Դպրոցում պատմագրության դասավանդումը խիստ **արդիական** է, քանզի աշակերտներին գաղափար է տալիս հայ ժողովրդի անցած ճանապարհի, քաղաքական պատմության, օտար նվաճողների դեմ հայության մղած ինքնապաշտպանական կռիվների մասին, ներկայացնում է երկրի ներքին կյանքի՝ հոգևոր դասի, թագավորական տան և ազնվականության փոխհարաբերությունների խնդիրները, ձեռբերումները,մշակույթը, նվաճումները, ծանոթացնում է պատմական անձանց հետ, որոնք ազգային դիմագիծ են կերտել, դաստիարակում են ազգային ոգով, տոգորում վեհագույն սիրով՝ հայրենասիրությամբ: Կարծում ենք՝ հատուկ ուշադրության են արժանի մանավանդ այն թեմաների դասավանդումը, որոնք **կերտում են արժեհամակարգ, ազգային լեզվամտածողություն, ներկայացնում են ազգային հոգեբանությունը:** Մեր ընտրած թեմայի **արդիականությունը** պայմանավորված է հենց այդ հանգամանքով:

ՀԻմնական դպրոցում՝6-րդ դասարանում, <<Մայրենիի>>ժամերին, ծանոթանում ենք պատմագրական նյութերի՝ վերցված Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու <<Հայոց պատմություն>> աշխատություններից: Պատմագրությանը առավել խորությամբ և հանգամանորեն անդրադառնում ենք 9-րդ, ապա 10-րդ դասարաններում, 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում կրկնությամբ ամրապնդում ենք գիտելիքները:

Այդ ամենը նկատի ունենալով՝ հետազոտական աշխատանքը ներկայացնում ենք 2 մասով՝<<Պատմագրության ուսուցումը 6–րդ և 9-րդ դասարաններում>> և <<Պատմագրության ուսուցումը 10-12-րդ դասարաններում>>, գործադրվող մեթոդները:

Մեր **նպատակն** է ընտրել համապատասխան **մեթոդներ և հնարներ** `աշակերտներին սովորեցնելու հայ պատմագրական երկերը, զարգացնելու նրանց կարողունակությունները, դաստիարակելու մեր նախնիներին արժանի հետնորդներ, որոնք իրենց հայրենասիրությամբ, սխրանքով արժանի են լինելու հպարտորեն կրելու հայ անունը, ձևավորելու որոշակի կարողունակություններով օժտված հայ քաղաքացի, ով պատրաստ է դիմագրավելու ցանկացած փոփոխության, քննական վերլուծություն կատարելու, գործելու հանուն իր երկրի բարօրության, բարգավաճման:

<<Աշխարհը բարելավելու համար հարկավոր է շրջվել դեպի դրական կրթական **մեթոդներ:** Այն պահից, երբ բացահայտվեն առավել **արդյունավետ մեթոդները**, կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը>>: ՍՔԻՆԵՐ

Արդյունավետ դասավանդման համար հարկավոր է ոչ միայն դասավանդվող առարկայի խորը իմացություն, այլև դասավանդման **նպատակների, խնդիրների** դրանք իրագործող ձևերի նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն: Կարևոր է **մեթոդները** հմտորեն համադրել և տեղին կիրառել. դա ենթադրում է մասնագիտական փորձառություն:

Թեև անցնելիք պատմագրական թեմաները կրկնվում են(տարբեր խորություններով), 6-րդ, 9-րդ 10-րդ դասարաններում կիրառում եմ տարբեր **մեթոդներ,** որպեսզի դասերը չլինեն միօրինակ, միապաղաղ ձանձրալի(Բանավեճ, զրույց, ԳՈՒՍ,հեղինակի աթոռ,խմբային հետազոտություն, Վենի դիագրամ, մտագրոհ և այլն):

Պատմագրությունն ուսուցանելիս մեզ համար կարևոր **խնդիրներ** են աշակերտի մեջ սեր արթնացնել ընթերցանության հանդեպ, զարգացնել աշակերտի ինքնությունը, ստեղծարարությունը, քննադատական մտածողությունը, հարուստ բառապաշարով կապակցված խոսք կառուցելը.կարողունակություններ, որոնք նրան պետք են կյանքում:

ԳԼՈՒԽ 1. Հայ պատմագրության ուսուցումը դպրոցի միջին դասարաններում

Տարրական դասարաններում աշակերտները որոշակիորեն ծանոթանում են հայ պատմագրությանը, այդ գիտելիքները խորացվում են 6-րդ դասարանում. Մայրենիի դասագրքում կա ,,Իմ տունը Հյաստանն է>> խորագրով ներկայացվող դասանյութերի մեջ տեղ են գտել <<Հայկ և Բել>>, <<Արշակ և Շապուհ>>, <<Արա Գեղեցիկ և Շամիրամ> ավանդազրույցները:

«Հայկ ու Բել»[1] թեման ներկայացնելիս, բնականաբար, անհրաժեշտ է խոսել պատմահոր մասին. **<<Հեղինակի աթոռ>> մեթոդով** մի քանի աշակերտ ներկայացնում են Խորենացու կենսագրությունը՝ կարևորելով՝ ինչո՞ւ հենց Խորենացուն պատվեցինք քերթողահայր անվամբ, ընդհանուր գծերով ներկայացնում են նրա «Պատմություն հայոց» աշխատությունը:

Ապա առասպելն ուսումնասիրելուց հետո բնութագրում են Հայկին, արտաքին նկարագրին ավելացնում բնավորության կարևոր գծերը, որոնք մենք ժառանգել ենք Հայկից: **T-աձև աղյուսակով** համեմատում ենք Հայկին և Բելին.

Հայկ	Բել
Ամրակազմ	Բռնակալ
Ուժեղ	Վախկոտ
Անհնազանդ	Իշխանատենչ
Ազատատենչ	Հանդուգն
Պայքարող	Պաշտպանվող
Հաղթող	Պարտվող
Շինարար	Անհանդուրժող

[1] Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենի 6, Երևան, «Էդիթ-Պրնտ» հրատարակչություն, 2012, էջ 80:

Աշակերտները սովորում են Հայկից կարևորագույն հատկանիշները՝ լինել ազատասեր, ազնիվ, քաջ, պայքարել ազատության համար և կառուցել, ստեղծել արարել:

Ապա ուսումնասիրում ենք <<Արշակ և Շապուհ>> ավանդազրույցը: Կրկին ծանոթանում ենք պատմիչի կենսագրությանը՝ **<<Էստաֆետ>> մեթոդով** աշակերտները միմյանց լրացնելով ներկայացնում են Փ. Բուզանդի կենսագրությունից այն, ինչ հայտնի է:

Կարդում ենք առասպելը **<<Ուղղորդված ընթերցանություն>> մեթոդով**. կարդում ենք հատված, ապա գուշակում `ի՞նչ է լինելու հետո: Ավանդազրույցը վերլուծելուց հետո այն բեմականցնում ենք: Կրկին համեմատում ենք Արշակին և Շապուհին, Արշակին և Հայկին, որոշում նմանություններն ու տարբերությունները:

Այս առասպելում կարևորում ենք հողի զորությանը գաղափարը, աշակերտները սովորում են գիտակցաբար սիրել հայրենի հողը, հողի և ջրի կապը մեզ տանում է դեպի գոյության սկիզբ, երբ գոյություն է ունեցել հողի պաշտամունք, ուրեմն և հողի աստված, ջրի պաշտամունք, ուրեմն և ջրի աստված: Ակնարկում եմ, որ ջրի պաշտամունքի հետքերը տեսնելու ենք <<Սասնա ծռեր>> դյուցազներգությունն ուսումնասիրելիս:

<<Դասախոսություն>> մեթոդով երկու աշակերտ ներկայացնում են պատմական Արշակ II-ին և Շապուհ Երկարակյացին:

<<Բանավեճ>մեթոդի շրջանակներում քննարկում ենք հետևյալ հարցը.արդյոք ճի՞շտ վարվեց Արշակը `Շապուհի մոտ գնալով:Մտածում ենք նոր ավարտ ավանդազրույցի համար.Արշակը չի գնում Տիզբոն, Արշակը վերադառնում է Տիզբոնից:

Ամփոփում ենք **<<Հաստ>> և <<Բարակ>> հարցերի աղյուսակով:**

Հաստ հարցեր	Բարակ հարցեր
Բացատրություն բերեք, թե ինչու՞ Արշակը գնաց Տիզբոն: Բացատրեք՝ ինչու՞ Շապուհը փորձեց նրան: Ինչու՞ եք մտածում, որ հողը զորեղ է:	Ո՞վ է Արշակը: Ի՞նչ դաշինք էին կնքելու: Ե՞րբ է տեղի ունեցել այս հանդիպումը: Հնարավո՞ր է, որ Արշակը չբմբոստանար: Կարո՞ղ են հաշտվել Արշակն ու

Ինչու՞ եք գտնում, որ Շապուհը վախեցավ Արշակից: Ո՞րն է Արշակի և Շապուհի տարբերությունը: Ենթադրեք՝ ի՞նչ կլինի, եթե Արշակը վերադառնա Հայք:	Շապուհը: Ինչպե՞ս անվանել Շապուհի փորձությունը: Համաձա՞յն եք դուք Արշակի հետ:

<<Արա Գեղեցիկ և Շամիրամ>> առասպելը մեզ տանում է հնագույն ժամանակներ, երբ հզոր էր Ասորեստանը, և Արարատի թագավորությունը վտանգ էր ներկայացնում նրա համար:

Ծանոթանում ենք Ասորեստանի պատմությանը՝ միջառարկայական կապեր ստեղծելով <<Հայոց պատմություն>> և <<Աշխարհագրություն>> առարկաների հետ: Քարտեզի վրա գտնում են Ասորեստանը , Արարատյան թագավորությունը, որոշում, թե ինչ ճանապարհով կարող էին ասորեստանցիները գալ մեր երկիր:

<<Բառ-բանալի>> մեթոդով գրում են փոքրիկ շարադրանք՝ գործածելով ավանդազրույցից վերցված վեց բառ՝Հայաստան, թագավոր, կռիվ, զոհվել, վերակենդանացնել, կառուցել:

Ապա կարդում են ավանդազրույցը, վերարտադրում, վերլուծում: Ներկայացնում են Արային, հավաքում տեղեկություններ Արայի, Շամիրամի մասին: Աշակերտների համար հայտնագործություն կլինի, երբ ուսումնասիրելիս կհասկանան, որ Արան մեռնող և հարություն առնող աստվածություն է, որի պաշտամունքը դարձյալ մեզ տանում է հնագույն ժամանակներ:

Արայից սովորում ենք լինել հայրենասեր, հավատարիմ, ազգանվեր : Վերջնարդյունքում սովորում են նոր բառեր, դրանցով կապակցված խոսք կազմել, կարծիք հայտնել, դաստիարակվում են հայրենասիրական ոգով, անդավաճան նվիրումով:

m-աձև աղյուսակով համեմատում են Հայկին, Արշակին, Արային:

Հայկ	Արշակ	Արա Գեղցիկ
Քաջ Անհնազանդ Կառուցող Ըմբոստ ազատասեր	Արի Համարձակ Անհաշտ Անձնազոհ հաստատակամ	Անվախ Խելացի Չգայթակղվող Հավատարիմ նվիրված

Միջին օղակում այսքանով ավարտվում է ծանոթությունը ավանդազրույցներին:

Բուն պատմագիտական նյութերի ուսուցումը հիմնական դպրոցում սկսվում է 9-րդ դասարանից[2]:

9-րդ դասարանում աշակերտներին գաղափար է տրվում Ոսկեդարյան մշակույթի մասին. Ծանոթանում են հինգերորդ դարի պատմիչներին , գրերի գյուտից հետո թարգմանական և ինքնուրույն գրականության ձևավորմանը, սակայն հանգամանալից ներկայացված են միայն Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու երկերը:

Ըստ թեմատիկ ծրագրի՝ առաջինն անդրադառնում ենք Կորյունի «Վարք Մաշտոցի» երկին[3], որը հայ գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի կյանքի և գործունեության մասին տեղեկությունների հիմնական սկզբնաղբյուրն է:

<<Դասախոսություն>> մեթոդով ներկայացնում ենք Կորյունի կենսագրությունը, իմանում ենք, որ Կորյունը հայ առաջին պատմագիրն է, որն իր գրքում նկարագրել է Մեսրոպ Մաշտոցի կյանքի կարևոր դրվագները, հայոց գրերի ստեղծման պատմությունը,ինչպես սկզբնավորվեց հայ մատենագիտությունը, դպրոցաշինության

[2] Տե՛ս Գասպարյան Դ., Գրականություն 9, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2013, էջեր 16-65:
[3]Կորյուն, Պատմութիւն վարուց և մահուան սրբոյ Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի

և կրթական գործի կազմակերպման պատմությունը հայ թարգմանիչների գործունեության, հեթանոսության և աղանդավորության դեմ մղված պայքարի մասին:

Աշակերտներին տեղեկացնում ենք, որ Կորյունը իր սիրելի ուսուցչի վարքը գրել է խորին ակնածանքով, նրա երազանքն էր հավերժացնել իր ուսուցչի կյանքն ու գործը, և երբ ստանում է կաթողիկոսական տեղապահ Հովսեփի հանձնարարությունը / ով նույնպես Մաշտոցի աշակերտն էր/՝ գրել ուսուցչի վարքը, սիրով ձեռնարկել է այդ գործը: Նա գիտակցել է իր գործի պատմական նշանակությունը: Իր մատյանում նա գրում է . «Նպատակ եմ դրել գալիք հավիտենականությանը պահ տալ»[4]:

Կորյունը տեղեկություններ է տալիս ոչ միայն Մաշտոցի կենսագրության, այլև նրա մանկավարժական ու քաղաքական գործունեության մասին: Նա Մաշտոցի սխրանքները համեմատել է Մովսես մարգարեի հետ: Կորյունը՝ իբրև ջերմեռանդ քրիստոնյա, Մաշտոցի կողմից գրերի ստեղծումը համարում էր Աստծու շնորհ՝ գրելով. «Ամեն բան շնորհող Աստծուց ինչպես պարգևեց նրան այդ բախտը, նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝հայերեն լեզվի նշանագրերը»[5]:

Կորյունի գիրքը արժեքավոր է ոչ միայն հայոց գրերի ու դպրության մասին տեղեկություններով, այլև նրանով, որ հեղինակը ստույգ տեղեկություններ է տալիս այն աղանդների մասին, որոնք Հայաստան էին թափանցել:Մաշտոցը պայքարում է դրանց դեմ, այդ աղանդների, մասնավորապես բորբոռիկների, նեստորականների ուսմունքները Կորյունը չի բացատրել ՝ սահմանափակվելով «սատանայակիր», «ճիվաղականներ», «վայրենամիտ», «անասնաբարո» բնութագրումներով:

Կորյունի աշխատությունը բարձր է գնահատվել ուսումնասիրրողների կողմից և մինչ օրս հանդիսանում է սկզբնաղբյուր, անգամ օտար ուսումնասիրողների համար արժեքավոր է այնքանով, որ իր ոճի մեջ միակն է :<<Վարք Մաշտոցի>> երկը (գրաբար՝<<Պատմություն Վարուց եւ մահուան առն երանելւոյ սրբոյն Մաշտոցի վարդապետի մերոյ թարգմանչի>> մատենագիր Կորյունի երկ) հայկական տառերով գրված առաջին ինքնուրույն պատմական բնույթի աշխատությունն է:

---

[4] Կորյուն, «Վարք Մաշտոցի», Երևան, 1977թ:
[5] Տե՛ս նույն տեղում:

Համաձայն ժամանակակից ուսումնասիրողների՝<<Վարք Մաշտոցի>>-ն գրվել է մոտավորապես 443-450 թթ. ընթացքում: Երկի գրության թվականը որոշելու համար հայագետներին հիմք է տվել այն հանգամանքը, որ Կորյունի երկում չկա որևէ հիշատակում կամ ակնարկ 450-451 թթ. Վարդանանց պատերազմի մասին, իսկ Վասակ Սյունին ներկայացված է դրական գույներով:<<Վարք Մաշտոցի>> երկում զետեղված տեղեկությունների համաձայն՝ Կորյունը անձամբ մասնակցել է Մաշտոցի ու Սահակի գործերին՝ իբրև արբանյակ (կրտսեր գործակից):

Այն լույս է տեսել Երևանում 1941 թվականին Մանուկ Աբեղյանի աշխարհաբար թարգմանությամբ, ընդարձակ առաջաբանով և ծանոթագրություններով: Միջառարկայական կապեր ստեղծելով քանդակագործության հետ՝ ներկայացնում ենք Երևանի Մատենադարի մոտ տեղադրված <<Մեսրոպ Մաշտոց և Կորյուն>> բազալտե արձանախումբը, որը կերտել է քանդակագործ Ղուկաս Չուբարյանը 1967թվին:

Այնուհետև վերհիշում ենք վեցերորդ դասարանում ուսումնասիրած դասանյութը Փավստոս Բուզանդի մասին: Նորովի ենք ներկայացնում հայտնի փաստերը՝ ավելի գիտակցված, ելնելով տարիքային առանձնահատկություններից:

Կապը <<Ինֆորմատիկա>> առարկայի հետ ամրապնդելով՝ սահիկաշարով աշակերտները կներկայացնեն փոքրիկ դասախոսություն՝ հինգերորդ դարը յուրովի ներկայացնելով:

Աշակերտները ինքնուրույն ուսումնասիրում են և ներկայացնում, որ <<Պատմություն հայոց> մատյանն ընդգրկում է 330-387թթ.՝ սկսելով այնտեղից, որտեղ ավարտում է Ագաթանգեղոսը, և ավարտելով Հայաստանի առաջին բաժանումով Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Ստեփանոս Մալխասյանցը Փավստոս Բուզանդի «Պատմություն Հայոց» վիպական նյութը բաժանում է երեք ճյուղերի՝ հոգևոր վեպ, արքունական վեպ, Մամիկոնյան տան վեպ: Պատմիչը՝ որպես սկզբնաղբյուր, օգտագործել է ժողովրդական բանավոր ավանդազրույցները, այդ թվում՝ ժողովրդական վեպեր, զրույցներ, երկեր, ինչպես նաև Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը:

Փավստոս Բուզանդը հայ առաջին պատմագիրն է, որ ներկայացնում է հայ ժողովրդի իշխող խավերի ներքին կյանքը, նրանց բարոյական և քաղաքական

հայացքները, հավատալիքները, նիստուկացը, սովորությունները, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հակամարտությունները, թագավորների անվայելուչ վարքը: Նա ձգտել է ցույց տալ Հայաստանի երբեմնի հզորությունը, անպարտելիությունը, հայրենիքի անկախության ու ազատության համար ժողովրդի մղած հերոսական պայքարը: Բուզանդը հանդես է եկել նաև հայոց եկեղեցու ամրապնդման դիրքերից: Բուզանդը ներկայացնում է երկրորդ մեծ վեպը՝ <<Երեսնամյա պատերազմը>>: Այն նաև առաջին գեղարվեստական ստեղծագործությունն է՝ գեղարվեստական պատկերավորման միջոցների օգտագործումով:

Աշակերտները կարդում են այն հատվածը, որտեղ նկարագրում է Ներսես Մեծին: Նա մեծ դրվատանքով է ներկայացրել Ներսես Մեծ կաթողիկոսի՝ Աշտիշատի ժողովում ընդունած կանոնները՝ որպես քրիստոնեական բարոյականության հաստատման միջոցներ: Նա գտնում էր, որ եկեղեցին ու պետությունը երկվորյակներ են և պետք է պայքարեն թշնամի ուժերի դեմ : Ըստ Բուզանդի՝ Աստծո կողմից հաստատված կարգերը հավիտենական են ու անփոփոխ, ուստի քաղաքական ու սոցիալական փոփոխությունների ձգտումը մեծագործություն է: Նա քարոզում էր այն գաղափարը, որ երբ գահակալներն ու նախարարները գործել են տերերի պատգամով ու խորհրդով, երկրում խաղաղություն է տիրել, իսկ երկիրը անպարտելի ու հզոր է եղել

Հետագա ուսումնասիրողները ձգտել են նվաստացնել <<Պատմության>> կարևորագույն արժեքը, մինչդեռ մատյանն ընդգծում է կանոնակարգված պետություն ունենալու, աստվածավախ, բարոյական թագավոր ունենալու կարևորությունը, երբ հաշտ են թագավորական գայիսոնն ու կաթողիկոսական մականը:

<<Արշակ և Շապուհ>> հատվածը ուսումնասիրելիս կիրառում ենք**<<Ուսումնական նվաճումներ> մեթոդը**. արդեն կարևոր է անհատական աշխատանքը և համագործակցային աշխատանքի խորացված դրսևորումը:

Փավստոս Բուզանդի «Պատմություն Հայոցը» ունեցել է բազմաթիվ հրատարակություններ, աշխարհաբար թարգմանությունը կատարել է Ստեփանոս Մալխասյանցը, որը լույս է տեսել 1968 թվականին:

Ըստ 9-րդ դասարանի թեմատիկ ծրագրի՝ հաջորդ հեղինակը Մովսես Խարենացին է:

Վերհիշում ենք այն, ինչ գիտենք Խորենացու մասին, ավելացնում ենք նոր տեղեկություններ, որոնք վեցերորդ դասարանում աշակերտերին հասու չեն եղել տարիքային առանձնահատկությունների հիմնավորումով: 9-րդ դասարանում նրանք ուսումնասիրում են՝ ինչ շարժաթիթով է գրել <<Հայոց պատմությունը>>, ով էր պատվիրատուն, մատյանը ինչ մասերից է կազմված, ինչ սկզբունքով է շարադրված:

<<Դասախոսություն>> մեթոդով ծանոթացնում ենք հենակետային խնդիրներին. Խորենացու մատյանը հայ պատմագրության ամենակարկառուն ստեղծագործությունն է, քանի որ ներկայացնում է ամբողջական պատմություն, գրված է պատմագրության սկզբունքով, այն է՝ ստույգ ժամանակագրություն, հավաստի պատմություն, համառոտ շարադրանք՝ առանց երկարաբանության, ներկայացնել ամեն ինչ ճշտելուց, ճշգրտելուց հետո միայն: Պատմահայրը առաջինն էր, որ ներկայացրեց հայ ժողովրդի ծագումնաբանությունը՝ սկսելով անհիշելի ժամանակներից:: Առասպելներ և ավանդություններ ներկայացնելիս նա ջանացել է պարզել, միմյանցից զատել իրականն ու գերբնականը:

Խորենացու «Հայոց Պատմությունը» կազմված է երեք գրքից՝<< Հայոց մեծերի ծննդաբանությունը>>, <<Մեր նախնիների միջին պատմությունը>>, <<Մեր հայրենիքի պատմության ավարտը>>:

Իր շարադրանքը պատմիչը առաջ է տարել երեք ուղղություններով՝առաջինը հայոց թագավորների պատմությունն է, երկրորդը հայոց կաթողիկոսների պատմությունն է, երրորդը հայ նախարարական տների պատմությունն է, իսկ հարևան երկրների պատմությանը անդրադարձել է այնքանով, որքանով որ այն առնչվում է հայոց պատմությանը: Որպես շարադրանքի սկիզբ՝ նա սկսել է հայ ժողովրդի կազմավորումից և ավարտել է Արշակունյաց թագավորության վերացմամբ, Հայաստանի՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև երկրորդ բաժանումով 428թվականին::

Խորենացին մեծ տեղ է տալիս ժամանակագրությանը՝ գրելով. «Չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության>>: Խորենացին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում պետական կառույցների, արքունիքի, բանակի մասին,

քաղաքի և գյուղի հակադրության, սահմանաքարերի, ագարակների և դաստակերտների ու դրանցում ծառա ստրուկների մասին: Նա քննադասում է մեր թագավորների անիմաստասեր վարքը, որոնք հոգ չեն տարել գրի առնելու իրենց գահակալության տարիներին տեղի ունեցած կարևոր իրադարձությունները, այլ ժամանակն անցկացրել են խնջույքների մեջ, այդ առումով գրում է .<<Թեպետ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված գրելու և հիշատակելու արժանի>>:

9-րդ դասարանում ուսումնասիրում ենք <<Հայկ և Բել>>, <<Արա Գեղեցիկ և Շամիրամ>>, <<Տիգրան և Աժդահակ>>, <<Արտաշես և Սաթենիկ>> առասպելները: Հատկացված 12 ժամաքանակի շրջանակներում ուսումնասիրում ենք առասպելները, աշակերտները կարդում են դուրս գրված հատվածները, գլխավոր հերոսներին բնութագրող տողեր,համեմատում են հերոսներին, դուրս բերում գեղարվեստական պատկերավորման միջոցները, **<<Զրույց>>, <<Հարց և պատասխան>> մեթոդներով** խորացնում ենք ուսուցումը , բառապաշարը հարստացնում ենք նոր բառերով, խոսքը կառուցում ենք՝ գործածելով նորածանոթ բառերը: **<<ԳՈՒՍ>> մեթոդով** ամփոփում ենք սովորածը, անդրադարձ կապ ենք ստեղծում. ի՞նչ սովորեցինք, ի՞նչ կարող ենք անել, ի՞նչ կարողունակություններ ձևավորվեցին և զարգացան: Չենք մոռանում դաստիարակչական հարցերը. ի՞նչ բարոյական գծեր ենք ժառանգել մեր նախնիներից, ինչպիսի՞ն պիտի լինենք, բնավորության ի՞նչ գծեր են մերժելի, ինչի՞ց պիտի խուսափենք: Աշակերտները եզրակացնում են, որ կարևոր է հայրենասիրությունը, նվիրումը, անձնազոհությունը, հավատարմությունը, խոնարհությունը, մերժելի են դավաճանությունը, ամբարտավանությունը, վախկոտությունը, բռնությունը:

Դա կարելի է ներկայացնել **<<Մտքերի տարափ>> մեթոդով:**

Նյութը ամփոփում ենք **<<Վենի դիագրամ>> մեթոդով՝** աշակերտների անմիջական մասնակցությամբ համեմատելով երկու պատմիչներին և նրանց երկերը:



ԳԼՈՒԽ 2. Հայ պատմագրության դասավանդումը ավագ դպրոցում

Ավագ դպրոցում՝ 10-րդ դասարանում, սկսվում է մի նոր շրջան, որը պահանջում է մոտեցումների և գործադրվող մեթոդների փոփոխություն:

Աշակերտների տարիքային առանձնահատկությամբ պայմանավորված՝ արդեն առավել նպատակահարմար է գործադրել **փոխգործուն մեթոդները**:

Այս մեթոդների կիրառումը պետք է համապատասխանի չափորոշչային նոր պահանջներին, աշակերտներին ազատ և ինքնուրույն մտածողության, կարծիք հայտնելու, ինքնուրույն կողմնորոշման կարողունակությունների զարգացմանը նպաստի:

Փոխգործուն մեթոդների կիրառումն ունի մի շարք **առանձնահատկություններ,** որոնցից կարևորվում են հետաքրքրությունների բացահայտումը, աշակերտների իմացական ոլորտի զարգացումը, համագործակցային ունակությունների ձևավորումը, ինքնուրույն աշխատանքներ կատարելու կարողունակության զարգացումը և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ դասընթացը կազմակերպելիս փոխգործուն մեթոդների կիրառման ընդհանուր բանաձևեր չկան. ցանկացած պարապմունք եզակի և առանձնահատուկ է, նույնիսկ եթե թեմաները կամ թեմաներից մի քանիսն արդեն աշակերտներին ծանոթ են: Նույն թեման տարբեր դասարաններում կարելի է ներկայացնել ընդգրկման տարբեր չափերով, տարբեր խորություններով՝ անշուշտ, ելնելով աշակերտների տարիքային յուրահատկություններից, ինչպես նաև տվյալ դասարանի ընդհանուր մակարդակից:

Անդրադառնալով 10-րդ դասարանի գրականությանը[6]՝ նշենք, որ այս դասարանում ևս անդրադառնում ենք Ոսկեդարին, ընդհանուր գծերով ներկայացվում են գրերի գյուտը, Մեսրոպ Մաշտոցը, պատմիչները՝Կորյուն, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Եղիշե, Ղազար Փարպեցի, իսկ առանձնաբար՝ միայն Մովսես Խորենացին:

---

[6] Տե՛ս Ներսիսյան Վ. Մնացականյան Լ., Հայ գրականություն 10, Երևան, «Մարմար» հրատարակչություն, 2014, էջեր 11-23:

Խորենացու <<Հայոց Պատմությունը>> ներկայացվում է այլ տեսանկյունից՝ ներկայացնելով կառուցվածքը, գրական արժանիքները,գեղարվեստական նկարագրությունները:Անդրադարձ ողբի ժանրին. Պատմահոր <<Ողբով>> հայ գրականության մեջ սկզբնավորվում է նոր ժանր: Ինչու՞ գրվեց ողբը, նախադրյալները ներկայացնում են աշակետները՝ փաստեր քաղելով <<Հայոց պատմություն>> առարկայից **/միջառարկայական կապ**/: **<<Խմբային հետազոտություն>>մեթոդով** աշակերտները , խմբերի բաժանված, ուսումնասիրում են <<Ողբը>> հատվածաբար և ներկայացնում, վերլուծում, քննադատական վերաբերմունք դրսևորում, արդիականացնում՝ կապ ստեղծելով 5-րդ և 21-րդ դարերի միջև, ցույց տալով նմանություններն ու տարբերությունները:

Ծանոթություն ժողովրդական բանահյուսությանը. վերհիշում ենք `դեռևս 5-րդ դասարանում ծանոթացել ենք բանահյուսական ստեղծագործությունների՝ հեքիաթների և առակների: Գիտենք հանելուկներ, առած-ասացվածքներ, թևավոր խոսքեր, ավանդազրույցներ: Այժմ առասպելը քննում ենք 10-րդ դասարանցու տեսանկյունից՝ ավելացնելով այն կարևորը, որն անհրաժեշտ է իմանալ ավագ դպրոցում: Ուսումնասիրության նյութ են <<Հայկ և Բել>>, <<Վահագն Վիշապաքաղ>>, <<Արտաշես և Արտավազդ>> առասպելները: Դրանք ուսումնասիրում ենք**<<Խճանկար>> մեթոդով>>**: Մեծերը բարձր են գնահատել Խորենացուն, նրա գործը, հիշում ենք ասույթներ, որոնց մեջ առանձնանում է Ավետիք Իսահակյանի խորիմաստ գնահատականը.

<<Չորս գիրք ունի հայ ժողովուրդը, որ, ինչպես չորս բարձր սյուներ, կրել են հայ ժողովրդի ոգին, նրա պայքարի իմաստը, նրա լավագույն ապագայի տենչանքները, նրա իդեալները. Մովսես Խորենացու<<Հայոց պատմությունը>>, Եղիշեի Վարդանանց պատերազմը, Նարեկացու խոսքը անմահության և հավերժության հետ և Աբովյանի <<Վերքը>>>>:[1]

12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում կրկնում ենք գրականության ողջ նյութը, այդ թվում նաև Ոսկեդարը: Աշակերտներն այս անգամ կարող են պատրաստել սահիկաշար և դրանով արագ ներկայացնել նյութը՝ միաժամանակ պատասխանելով շտեմարանային հարցերին, որով վերջնականապես ամրապնդվում է տարիներ շարունակ սովորածը:

1Վ. Ներսիսյան, Լ.Մնացականյան, Հայ գրականություն,10,էջ35

Ագաթանգեղոսի *Հայոց պատմություն*» թեման ներկայացնենք սահիկաշարով.



Եղիշեի «Վասն Վարդանա և հայոց պատերազմի» երկին անդրադառնալիս ի շարս պատմագիտական և գեղարվեստական նյութերի՝ հետաքրքրական ենք համարում նաև ներկայացնել Վարդան Մամիկոնյանի հանրահայտ պատկերի մասին տեղեկություններ.



Խոսելով Ղազար Փարպեցու մեծարժեք երկի մասին՝ կարելի է կիրառել

<< Զրույցի>> և <Հարց ու պատասխանի>> մեթոդները: Ի՞նչ են հիշում Ղ. Փարպեցու մասին, ի՞նչ հարաբերություններ է ունեցել Վահան Մամիկոնյանի հետ և այլն: Արդյոք հիշու՞մ են, որ երբ Վահան Մամիկոնյանը նշանակվում է հայոց մարզպան, Փարպեցուն նշանակում է Վաղարշապատի կաթողիկե եկեղեցու վանահայր: Հենց Վահան Մամիկոնյանի պատվերով էլ Ղազար Փարպեցին գրում է<<Պատմություն Հայոց>>-ը, այսինքն՝ Վահան Մամիկոնյանը եղել է Ղազար Փարպեցու մեկենասը, ինչպես որ Սմբատ Բագրատունին էր Մովսես Խորենացու մեկենասը:

Նպատակահարմար ենք համարում նյութն ավարտել **<<Հասկացությունների աղյուսակով>>**՝ ներկայացնելով 5-րդ դարի՝ հայոց պատմություն գրած բոլոր պատմիչներին և նրանց աշխատությունները:

Ագաթանգեղոս	Փավստոս Բուզանդ	Եղիշե	Ղ. Փարպեցի	Մ. Խորենացի
Հայոց պատմություն	Հայոց պատմություն	Վասն Վարդանայ և հայոց պատերազմի	Հայոց պատմություն	Հայոց պատմություն
III դարի 60-ական թվականներից մինչև 330թվ.	Խոսրով Գ Կոտա-կից մինչև Հայաստանի առաջին բաժա-նումը (330-387թթ.):	Վարդանանց պատերազմին նախորդող, հաջորդող ժամանակները և 451թ. Մայիսի 26-ին տեղի ունեցած Վարդանանց պատերազմը	Հայաստանի 1-ին բաժա-նումից միչև 480-ական թվականները (387-487թթ.	Ամբողջական պատմություն (Անհիշելի ժամանակներից Ք.ա.2492թ.-440թ.)
Առաջաբան, երեք մաս	Առաջաբան, չորս դպրություն	Նախաբան, յոթ գլուխ	Առաջաբան, 3 դրվագ	Առաջաբան, երեք մաս, Ողբ
		Դավիթ երեց Մամիկոնյան	Վահան Մամիկոնյան	Սահակ Բագրատունի

Եզրակացություն

Դպրոցում կրթության գործի կազմակերպումը, մասնավորապես հայ գրականության ուսուցումը ձևավորում է վաղվա քաղաքացուն, նրան պատրաստում է կյանքի փորձություններին պատվով դիմագրավելու, ինքնուրույն մտածելու և գործելու: Պատմագրության ուսուցումը այդ ամենին նախապատրաստում է մեր նախնյաց օրինակով՝ կերտելով հայ մարդու բարոյական նկարագիրը: Ուսուցման տարբեր մեթոդների կիրառումով ելակետը մեկն է՝ զարգացնել աշակերտի կարողունակությունները, զինել գիտելիքներով, հարստացնել բառապաշարը, ընդլայնել մտահորիզոնը խորացնել հայրենասիրությունն ուև անձնվիրությունը:

Կարծում ենք, որ դասավանդման արդյունավետ մեթոդ ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի ինչպես երեխաների տարիքային առանձնահատկությունները, այնպես էլ տվյալ դասարանի հնարավորություններն ու ընդհանուր հետաքրքրությունները:

Այսօր դասավանդման արդիականությունը ենթադրում է նաև ուսուցումը համապատասխանեցնել Հանրակրթության պետական չափորոշչին, ձևավորել վաղվա քաղաքացուն , զարգացնել նրա կարողունակությունները, պատրաստել կիրթ և դաստիարակված անհատ, ով պետք է լինի իր հայրենիքի ազնիվ, արդարախոհ, անձնվեր, հայրենասեր, նվիրյալ քաղաքացին, ով կրելու է նախնիների ոգին, նրանցից ժառանգած արժեհամակարգը, աչքի է ընկնելու ինքնուրույն, քննադատական մտածողությամբ, գեղագիտական ճաշակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գասպարյան Դ., Գրականություն 7, Երևան, 2011, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, էջեր 242:
2. Գյուրջինյան Դ., Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, Երևան, 2012, «Էդիտ Պրինտ» հրատարակչություն, էջեր 242:
3. Եզեկյան Լ., Հայոց լեզու, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2005, էջ 52-57:
4. Եղիազարյան Ա., Հայ գրականություն 12, Ընդհանուր և բնագիտա-մաթեմատիկական հոսքեր, Երևան, «Մանմար» հրատարակչություն, 2011, էջեր 186:
5. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ,Հայաստան, 2020, էջ 120:
6. Կիրակոսյան Վ., Ավետիսյան Զ., Հայ գրականություն 11, «Մանմար» հրատարակչություն, Երևան, 2010, էջեր 210:
7. Ղարիբյան Ար., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1947, էջ 164:
8. 1Վ. Ներսիսյան, Լ.Մնացականյան, Հայ գրականություն,10,էջ35